ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

ՀՀ Կոտայքի մարզ, ք. Աբովյան, Բարեկամության հր.-1, 2201, հեռ. (0222) 2-03-65, (060) 447-000, էլ. հասցե abovyan.kotayq@mta.gov.am

24-ը ապրիլի 2025թ.

ՈՒՂԵՐՁ՝ ԱՊՐԻԼԻ 24-Ի՝ ՀԱՅՈՑ ՄԵԾ ԵՂԵՌՆԻ 110-ՐԴ ՏԱՐԵԼԻՑԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

20-րդ դարասկիզբը հայ ժողովրդի պատմության ողբերգական էջերից է, երբ սկիզբ դրվեց հայության զանգվածային տեղահանությունների, կոտորածների, հայկական պատմամշակութային ժառանգության ոչնչացման երիտթուրքական ծրագրին: Այսօր լրանում է հայության դեմ իրագործված մեծագույն ոճրագործության՝ Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցը և մենք բոլորս, ցեղասպանությունը վերապրած հայերի սերունդները հայրենիքում և սփյուռքում շարունակում ենք ամենամյա տարաբնույթ միջոցառումներով, քայլերթերով, հարգանքի տուրքով ու բողոքի ակցիաներով բարձրաձայնել պատմական անարդարության և հայկական պահանջատիրության մասին:

Մեր օրերի իրողությունները համադրելով իրավացիորեն պիտի փաստենք, որ թշնամու ոճրագործ ձեռագիրը, հայատյաց քաղաքականությունը նույնն է նաև այսօր. քաղաքակիրթ աշխարհի աչքի առաջ բռնազավթվեց Արցախը, բռնի տեղահանվեցին շուրջ 120 000 հայեր:

Սիրելի՛ հայրենակիցներ.

Մեծ Եղեռնի տարելիցը, մեզ համար հիշատակի և խոնարհումի օր է, այսօր մենք ոգեկոչում ենք Հայոց ցեղասպանության 1,5 մլն անմեղ զոհերի հիշատակը, որոնց բազմաթիվ սերունդներ շարունակում են խնամքով պահպանել ու փոխանցել իրենց ծագմանն ու բնօրրանին առնչվող հուշեր և փաստեր:

Ապրիլի 24-ը առավել քան երբևէ մեզ համար պիտի լինի նաև համազգային պայքարի օր՝ հանուն Մեծ Եղեռնի ընդունման, ճանաչման և արդարության վերականգնման: Առաջնորդվելով պատմական հիշողությամբ՝ պիտի ապրենք արժանավայել ներկա և կառուցենք լուսավոր ու խոստումնալից ապագա:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ **Է. ԲԱԲԱՅԱՆ**